

## Մրցանակային 3-րդ տեղ

Անի Գևորգյան

Ստեփանակերտի հ.1 հիմնական դպրոց

8-րդ դասարան

## Ինչու են մարդու իրավունքները կարևոր

Տակավին փոքր էի, երբ մայրս անընդմեջ հիշեցնում էր ինձ.

-Միայն իրավունքներդ չէ, որ կարևոր են, մտածիր ու հիշիր նաև պարտականություններիդ մասին:

Իրավունքների իմացության ու պարտականությունների կատարման հավասարակշռման միջոցով մայրս ուզում էր դաստիարակել ինձ որպես ազնիվ ու պատասխանատու, կարգապահ ու ճշտապահ: Հետո ես մեծացա և իմ իրավունքների կարևորության մասին շատ ավելի լավ պատկերացում կազմեցի գոհված հորս չասված պատգամներից ու հորդորներից, խրատներից ու խորհուրդներից:

Պատկերացնում եք, ես հորս չեմ հիշում, որովհետև ընդամենը 1,5 տարեկան էի, երբ նա հեռացավ մեզանից...

Իսկ հիմա նա դարձել է իմ հիշողությունը, իմ երկրորդ <<ես>>-ը, իմ խղճի օրենքն ու դատավորը, համոզմունքներիս ու գաղափարներիս նշաձողը:

Իմ, մորս, հայրենիքիս իրավունքների պաշտպանության ու կարևորության համար է նա պայքարել: Իրավունքի լեզվով է նա իրականացրել բոլոր մարտական հերթապահությունները, նաև այն, որ ճակատագրական է դարձել իր համար, իրավունքի ճշմարիտ լեզվով է նա հակառակվել թշնամուն, իրավունքի լեզվով է նա ջախջախել թշնամու գլուխը ու հարկադրել նրան հետ շարտվել...

Զոհված պապիս վրեժը չէր, որ հորս վրեժխնդիր էր դարձրել, բնավ... Արցախյան պատերազմում, զոհված պապս, որ ևս պայքարել է Արցախի ազատության ու անկախության, ինքնորոշման իրավունքի համար, հորս մեջ ավելի է բորբոքել սեփական իրավունքի պահպանման ներքին մղումն ու կրակը: Այսպիսի նախանձելի գաղափարականությամբ պապիս, հորս ու հազարավոր քաջերի միջոցով գրվեց մեր պատմության փառավոր էջերից մեկը՝ արցախյան պատերազմի հաղթանակը, որն ինձ ու իմ հասակակիցներին պարտավորեցնում է պատասխանատու լինել հայրենիքի ու ազգի առաջ, սրբացած նահատակների առաջ, որոնց հրամաններն ամեն օր ականջիս են հասնում:

Հորս կերպարով ամեն օր նորոգում ու կերտում եմ ինձ հուսադրող ապագան, իսկ ինչքան մեծանում, ժամանակի հեռվից անցյալն ավելի է իմաստավորվում, ընդգծվում իմ ու սերնդակիցներիս իրավունքների պաշտպանությունը, ինքնորոշման իրավունքի պահպանումը:

Ես ուզում եմ ապրել իրավունքի պահպանման երկրում, որովհետև հայրս ու նրա գաղափարակիցները վաստակել են դա: Ուզում եմ խոսել ու մտածել իրավունքի լեզվով, որովհետև այդպես ես ինձ պաշտպանված եմ զգում, հզոր ու անխոցելի: Առանց սեփական իրավունքների գիտակցման չկա ու չի կարող լինել բարձր ու վեհ գաղափար: Չախտման են դատապարտված բոլոր այն մտքերն ու գործերը, որոնցում շրջանցված է իրավունքը:

Մենք չունենք հարատևման այլ ճանապարհ, քան սեփական իրավունքների ճանաչումն ու պահպանումն է: Եթե ոչ, ուրեմն տառապում ենք անօրինությամբ մթության մեջ:

Սեփական իրավունքի կարևորությունը մենք ժառանգել ենք դեռևս Վաչագան Բարեպաշտից, ում օրոք դեռևս 1500 տարի առաջ ընդունվել է իրավագիտական եզակի փաստաթուղթ՝ Աղվանից Արքա Վաչագանի Կանոնական Սահմանադրությունը: 1500 տարի շարունակ այդ Սահմանադրությունն ուղղակի թե անուղղակի կերպով ծառայում է մեր հողի վրա իրավական գիտակցության ձևավորմանը և որպես գերնպատակ՝ դարավոր հայ հողի պաշտպանությանը: Մենք գիտենք իրավունքի պահպանման հարգը: Մենք թուլանալու իրավունք չունենք և աշխարհին պետք է ներկայանանք մեր օրինապահ ու իրավապահ դիմագծով: Դա է մեր տեսակը:

Ես հավատում եմ իրավունքի ուժին: Այն ուղիղ համեմատական է հորս բազկի ուժին, որովհետև նա վաստակել է իմ ճիշտ ապրելու իրավունքը: Ես թալանելու և գողանալու միտք չունեմ, ինձ չի հրապուրում հարևանիս ինչքը, ես ուզում եմ շիտակ ապրել հերոսների արյամբ սրբացած հողում, ապրեմ իմ ու բոլորի իրավունքների գիտակցմամբ՝ զուգակցելով մորս հորդորած պարտականությունների կատարմամբ: